Հաշմանդամության Վերաքննումի Տեղեկություններ

Եթե դուք ստանում եք Սոցիալական Ապահովության կամ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի հաշմանդամության նպաստներ, պարբերաբար մենք վերաքննելու ենք ձեր առողջական վիճակը՝ ձեր հաշմանդամության ընթացքը ստուգելու նպատակով:

Ձեր նպաստները կը շարունակվեն եթե ձեր առողջությունը չի բարելավել կամ ձեր հաշմանդամությունը ձեզ չի թույլատրում աշխատել:

Վերաքննության ընթացքում դուք առիթ ունենալու եք ցուցադրելու, որ դուք տակաւին հաշմանդամ եք, որպեսզի ձեր նպաստները սխալմամբ չդադրեն: Ձեր վիճակի մասին բոլոր վկայությունները լիովին ուսումնասիրելու ենք: Եթե դուք ունեք մեկից ավելի տարբեր հիւանդություններ, մենք քննարկելու ենք ձեր ընդհանուր հիւանդությունների միացյալ ազդեցությունը ձեր աշխատելու կարողության վրա:

Ստորեւ ներկայացված են հաճախ հարցվող մի քանի հարցումներ՝Սոցիալական Ապահովության հաշմանդամության վերաքննումի մասին: Այլ հարցեր ունենալու դեպքում դիմեք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հաճա՞խ քննվելու է իմ առողջական վիճակը

Քննումների հաճախականությունը կախյալ է ձեր հաշմանդամության բնույթից եւ ծանրությունից, ինչպես նաեւ դրա լավանալու հավանականությունից:

- Բարելավում ակնկալելու դեպքում ձեր առաջին քննումը, օրենքի համեմատ, տեղի կունենա ձեր հաշմանդամ լինելուց վեցից մինչեւ 18 ամիս հետո:
- Եթե բարելավումը հնարավոր է, բայց չի կարող կանխատեսվել, ձեր հաշմանդամությունը վերաքննվելու է մոտ երեք տարին անգամ մը:
- Եթե բարելավում չի ակնկալվում, ձեր հաշմանդամությունը վերաքննվելու է մոտ եօթ տարին անգամ մը:

Ինչպե՞ս եմ տեղեկացվելու քննության մասին

Երբ մենք որոշենք ընդհանուր բժշկական քննության անհրաժեշտությունը, մենք նամակով ժամադրություն կ՚ուտանք ձեզ ներկայանալու Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Ի՞նչ է տեղի ունենում քննության ժամանակ

Քննության ժամանակ մենք հարցնում ենք թե ինչպես է ազդում ձեր առողջական վիճակը ձեր վրա եւ արդյոք այն լավացե՞լ է: Մենք ձեզնից պահանջում ենք ձեր բժիշկների անունները, հասցեները, հեռախոսի համարները եւ հիվանդանոցներից ու բժշկական աղբյուրներից տեղեկություններ: Եթե հաշմանդամության նպաստներ ստանալուց հետո (կամ ձեր վերջին վերաքննումից ետք) դուք աշխատել եք, մենք նաեւ պահանջում ենք տեղեկություն ձեր աշխատանքի ժամկետների, ստացված աշխատավարձի եւ ձեր կատարած գործի մասին:

Ո՞վ կայացնում է հաշմանդամության որոշումը

Մենք ուղարկում ենք ձեր բժշկական թղթերը Նահանգային Հաշմանդամության Որոշման Ծառայության մոտ: Այդ ծառայությունը Սոցիալական Ապահովության համար կայացնում է հաշմանդամության որոշումներ: Հաշմանդամության հարցերով փորձառու քննիչ մը ձեր բժիշկներից պահանջում է ձեր բժշկական փաստաթղթերը: Քննիչը եւ մի բժշկական խորհրդատու, որոնք աշխատում են միասնաբար, ուշադիր ուսումնասիրում են ձեր մասին ստացված բոլոր տեղեկությունները եւ այնուհետեւ կայացնում են որոշումը:

Ինչպե՞ս են նրանք կայացնում որոշումները

Ընդհանրապես որոշումը հիմնվում է ձեր բժիշկներից, հիվանդանոցներից կամ բժշկական այլ աղբյուրներից ստացված տեղեկության վրա: Սակայն, եթե բժշկական տվյալները չեն բաւականում, ձեզ ուղարկում ենք անվճար բժշկական քննության: Նամակով տեղեկացնում ենք ձեզ այս քննության ժամադրության մասին:

Եթե ես չհամաձայնեմ որոշման հետ

Անհամաձայնության դեպքում դուք կարող եք բողոքել մեր որոշումը: Սա նշանակում է, որ դուք մեզնից խնդրում եք ձեր վճիռի վերաքննումը, որպեսզի տեսնենք թե արդյոք մեր որոշումը ճիշտ էր:

(շրջել)

Գոյություն ունի բողոքարկման չորս մակարդակներ:՝ Մի մակարդակից յաջորդը բողոքարկելու համար ձեզ տրվում է 60 օր: Չորս մակարդակներն են.

- **Վերաքննում՝** ձեր պարագան վերաքննվում է մի անկախ քննիչի կողմից, որը առաջին որոշման չեր մասնակցել: Դուք կարող եք հանդիպել այդ քննիչի հետ, որը որոշում կկայացնի ձեր բողոքի վերաբերյալ:
- **Լսում՝** եթե դուք համաձայն չեք վերաքննման որոշման հետ, դուք կարող եք խնդրել տեսակցություն Վարչական Դատավորի հետ:
- **Վերաքննման Դատական Խորհուրդ՝** եթե դուք համաձայն չեք Վարչական Դատավորի որոշման հետ, դուք կարող եք վերաքննում խնդրել Վերաքննման Դատական Խորհուրդից :
- **Դաշնակցային դատարան՝** եթե դուք համաձայն չեք Վերաքննման Դատական Խորհուրդի որոշման հետ եւ կամ եթե Վերաքննման Դատական Խորհուրդը որոշում է չքննել ձեր դիմումը, կարող եք քաղաքացիական հարցով դաշնակցային դատարան դիմել:

Ինչպիսի՞ պայմաններում նպաստները դադրում են

Սովորաբար, կանխիկ նպաստները դադրում են միայն այն դեպքում, երբ ապացույցները փաստում են թե ձեր առողջական վիճակը բարելավել է եւ դուք կարող եք աշխատել կանոնավոր ձեւով: Եթե ձեր առողջությունը չբարելավի եւ դուք չկարողանաք աշխատիլ, ձեր կանխիկ նպաստները կը շարունակվեն:

եթե ես աշխատիլ փորձեմ

Սոցիալական Ապահովությունը ունի մի քանի հատուկ կանոններ, որոնք կարող են ձեզ օգտակար լինել եթե ուզում եք աշխատիլ:

Եթե դուք ստանում եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստներ, դուք կարող եք ինը ամիս (ոչ անպայմանորեն հաջորդական) տեւող փորձաշրջանի ընթացքում աշխատիլ եւ ունենալ անսահմանափակ հասույթ եւ տակաւին ստանալ ձեր լրիվ նպաստները: Այլ կանոններ թույլատրում են նպաստների եւ Մէտիքէրի շարունակումը, եթե դուք փորձեք աշխատիլ կանոնավոր ձեւով:

Եթե դուք ստանում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտի հաշմանդամության վճարներ, ձեր ամսական վճարումները կարող են շարունակվել, եթե ձեր եկամուտն ու դրամական միջոցները շարունակում են մնալ որոշակի սահմաններից ցած: Եթե ձեր աշխատանքի հասույթը գերազանցի Լրացուցիչ Ապահովության Եկամուտի սահմանները, ձեր վճարումները դադրեցնում ենք, սակայն տակաւին կարող եք իրավասու լինել Մէտիքէյտ/ Մէտիքէլի համար:

Մենք ունենք նաեւ այլ ծրագիրներ, որոնք կարող են ձեզ օգնել աշխատանքային ծախսերու, ուսուցման եւ վերահաստատության հարցերով: Հաշմանդամների աշխատանքի հատուկ կանոնների մասին լրացուցիչ տեղեկության համար դիմե՛ք ձեր Սոցիալական Ապահովության գրասենյակին:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՚կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10068-AM
What You Need To Know:
Reviewing Your Disability (Armenian)
January 2005